

## ԶՏԵՍԱԿ ԻՐ ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն հայրց քանաստեղծի 150-ամյա հոբելյանից երկու տարի առաջ էր: Մի օր առավոտյան զանգահարեց Գառնիկ Շախկյանը և ասաց, որ ուզում է շտապ հանդիպել և արագ անջատեց հեռախոսը: Անհանգստացա՜ ինչ-որ բան է պատահել... Մինչ կփորձեի նրան գտնել, արդեն իմ աշխատասենյակում էր: Լուռ մեկնեց մի նամակ և ասաց, որ կուզե՞նար այն «Լուովա ծոր» հայրենակցական միության անունից հասցեագրել երկրի ղեկավարությանը, որպեսզի ողջ 2019 թվականը նշվի որպես Թումանյանական: Ծավալուն նամակում հստակ գնահատանք էր և կոնկրետ առաջարկություններ: Ինչպես և ընտրող էր Գառնիկ Շախկյանին, ամեն ինչ հիմնավորված էր, կշռադատված, չափված ու ձևված: Մեր հանդիպման վերջում ավելացրեց, որ եսև մի գիրք է պատրաստում՝ նվիրված Հովհաննես Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը, և այն երևի հետաքրքիր թումանյանական հանրագիտակ կարող է դառնալ՝ մեծ քանաստեղծի գերաստանի պատմությունից սկսած մինչև նրա 54-ամյա կյանքի ավարտը, ինչպես նաև հետաքրքիր և ինքնատիպ պատմություններ ու դիպվածներ, որոնք առկա չկան մեծ հայրենակցին: Լոնցի, քանի որ գիտեի այն մեծ աշխատասիրության ու եպատակամտության մասին, որ ուներ 80-ամյա տարիք, քայք և ստեղծագործական ակտիվ որոնումներ ունեցող ճանաչված գիտնական-ճարտարապետը՝ իր հիմնական մասնագիտությամբ թազմաթիվ գրքերի հեղինակը («Լոռի», պատմության ջարակներ տշեր», «Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքները», «Ուզի, գույն, կերպար» և այլն), հայրենագիտության և թումանյանագիտական աշխարհ մտած Գառնիկ Շախկյանը՝ Լուովա Շնոր ցյուրից սերված, անհատում իր հայրենի եզրերին նվիրված, քայք և իր մասնագիտական արժեքներից չբաժանված, Հայաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման արժանացած, միշտ շարժուն ու անհագիտ մարդ-անհատականությունը:

Դրանից հետո այնպես ստացվեց, որ ես իր նոր գրքի մասին պարբերաբար տեղեկություններ էր տալիս կամ էլ խորհուրդներ հարցնում: Տեսնում էի, որ, չնայած դժվարություններին, գիրքը կամաց-կամաց

անբողջանում է: Չէի հարցնում, բայց գիտեի, որ առողջական լուրջ խնդիրներ ունեք, որը խնամքով քաջցնում էր: Երբեք չէր բողբոցում կանցքի ու իր ապրած ժամանակից, այլ նախընտրում էր խոսել կատարված, ընթացիկ և սպասվելիք գործերից:

Մեր վերջին հանդիպումը 2018-ի աշնանամուտին էր, հետաքրքրվեց, թե ինչ արձագանք է ունեցել դեռևս մեկուկես տարի առաջ երկրի ղեկավարությանն հասցեագրված նամակը և ասաց, որ իր խոստացած գրքի վերջին էջերն է գրում: Այդ տույն ընթացքում հասցուել էր ընդհատել թոմանյանական որոնումները և զբոսով գրել Հովհան Օժնեցի կաթողիկոսի մասին՝ նրա գահակալության 1300-ամյակի առթիվ: Այլ կերպ չէր վարվել Գառնիկ Շախկյանը, որովհետև չէր կարող անտարբեր լինել իր մեծ հայրենակցի նկատմամբ:

Մեր այդ վերջին հանդիպման ժամանակ հարցրեց, թե արդյո՞ք հեռավոր կլինի Թոմանյանի ծննդյան 150-ամյա հորելյանի շքանակներում հրատարակել նաև իր գիրքը: Ասացի, որ կոնկրետ որևէ քան ասել չեմ կարող, բայց քաղի գործերի համար Քարճրյալը միշտ էլ մի դուռ է բացում:

Ցավոք, շատ չանցած՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ին այս աշխարհից հեռացավ Գառնիկ Շախկյանը: Մահվանից 10 օր կամ երկու շաբաթ առաջ էր՝ գնզգահարեց, ասաց Ալավերդիում է, ծղորդ տանը, մի փոքր անառողջ է, բայց հիմա ամփի շատ է մտածում իր գիրքը տպագրելու մասին, կուզենար իր հարգանքի տուրքը այդպես մատուցել Ամենայն հայոց քահանայապետին: Ասացի, որ դիմել ենք տարբեր հասցեներով և երկի ինչ-որ արդյունք չուտով կունենանք:

Լոնց և անջատեց հեռախոսը, իսկ օրեր անց տխուր լուր ստացանք նրա մահվան մասին, ուրեմն ինքը այդ ժամանակ ինչ-որ գնացում ունեք: Նրա մահը ինձ համար պատգամ դարձավ՝ միջոցներ գտնել և տպագրել հայրենագիտության նվիրյալի թոմանյանական վերջին գիրքը: Այդ ամենը հեռավոր դարձրին «Կայնքս» խմբի ընկերությունների նախագահ Կարնի Մեջլումյանը և «Բեյզ Մետոլքս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արթուր Մկրտումյանը, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Այսպիսով, կատարվեց այլևս մեր կողմից չգտնվող՝ Թոմանյանի նվիրված մտավորականի նրազանքը՝ մի կողմից, մյուս կողմից՝ ընթերցողը թոմանյանական հորելյանական տարում իր գրասեղանին կունենա «Թոմանյանական հանրագիտակ» Գառնիկ Շախկյանի բնախնդիր աշխատասիրությանը ու շարադրմանը մի նոր ստեղծագործություն: Այստեղ տեղին է ավելացնել, որ թոմանյանական աշխարհ վարուց էր մտել Գառնիկ Շախկյանը, ով ընթերցողի սեղանին է դրել «Հովհաննես Թոմանյան. Հայրենագիտական համակազմեր», «Մեր Թոմանյանը՝ ժպտադեմ, զվաճախու ու զարմանահարաշ», «Թոմանյանի ընտանեկան

աշխարհը» խոր հայրենագիտական ակունքներ և վերլուծություններ ունեցող գրքերը: Գառնիկ Շախկյանը նաև նախաձեռնեց Թումանյանական հանրագիտարանը, որն այսօր աշտրատակում է տպագրության ՀՀ ԳԱԱ հանրագիտարանի խմբագրությունում:

Հռաով ենք, որ ընթերցողը սիրով կընդունի Գառնիկ Շախկյանի նոր «Թումանյանական հանրագիտակ» գիրքը, որը անկասկած մի քար կավելացնի թումանյանագիտության ասպարեզում՝ կրկին մեր ժողովրդին ներկայացնելով իր արժանավոր զավակին՝ Ամենայն հայոց քանաատեղծին՝ մեծ լոռեցուն:

***Սերգո Երիցյան***

***«Լոռվա ծոր» հայրենակցական միության նախագահ,  
քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***



Հովհաննես Թումանյանի արդարացման առիթով իայ համայնքի կողմից կազմակերպված խնջույքը Պետերբուրգի «Դոնոն» ռեստորանում, աջից կենտրոնը (նստած)՝ Հովհաննես Թումանյանն է, յոթերորդը՝ դուստր Աշխենը, 1912



Սայաթ-Նուվայի մահարձանի բացման արարողության ժամանակ Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում, 1914, մայիս



Ալեքսանդր Շիրվանզադեն, Խորեն  
 Բախտրյան Մուրադբեկյանը, Հովհաննես  
 Թումանյանը, Կիկոբաբյան քահանա  
 Տեր-Քավոյանը, Հովսեփ Խունուկը, 1914



Թումանյանի՝ ռազմաճակատ ուղևորությունների ճարտեզը, 1914-1915